*Հավելված*
*Հաշվեքննիչ պալատի*
*2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 235-Ա որոշման*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս ......................... 3

2. Ամփոփագիր ........................... 4

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ ..............4

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ ........5

5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ......14

6. Հետհսկողական գործընթաց ....................20

# 1. Ներածական մաս

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. օգոստոսի 7-ի թիվ 145-Ա որոշում, 2020թ. սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշում, 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշում |
| **Հաշվեքննության օբյեկտը** | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն |
| **Հաշվեքննության առարկան** | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն |
| **Հաշվեքննության առարկայի չափանիշները** | |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 30-ը ներառյալ: |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2020թ. օգոստոսի 17-ից մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը ներառյալ՝ հաշվեքննությունը կասեցվել է 2020թ. սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ, և վերսկսվել է 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր: |
| **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը: |

# 2. Ամփոփագիր

Առկա է անհամապատասխանություն ստացված տեղեկատվության և ոչ ֆինանսական ցուցանիշներում արտացոլված շահառուների թվաքանակների և գումարների չափերի միջև:

# 3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

Հայտնաբերված անհամապատասխանությունների ցանկ

| Հ/Հ | Միջոցառման հոդված | Միջոցառման անվանում | Շահառուներ, ըստ ստացված տեղեկատվության | Գումար, ըստ ստացված տեղեկատվության | Շահառուներ, ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների | Գումար, ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | 1205-12002 | Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ | 12,838 | 2,565,800 | 12,455 | 2,571,122.54 |
| 2. | 1225-12002, 1225-12003 | Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման | 347,959[1] | 15,692,933.385 | - | 16,635,861.99 |

[1] Ստացված տեղեկատվության համաձայն Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 6-րդ, 8-րդ, 9-րդ և 20-րդ միջոցառումների շահառուների ընդհանուր քանակը:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն | | | | |
| 3. | 1225-12004 | Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց | 9,719 | 971,900.00 | 9,643 | 964,325.50 |

# 4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները

ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ ՍԱԾ) ՀՀ 2020թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 387,553,093.75 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը 412,181,650.46 հազ. դրամ: Վեց ամիսների պլանը կազմել  է 194,306,420.24 հազ. դրամ, վեց ամիսների ճշտված պլանը՝ 218,168,301.35 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար փաստը 210,702,618.52 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 210,953,347.17 հազ. դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստը  կազմել է 173,530,023 հազ. դրամ, որը հաշվետու տարվա վեց ամիսների նկատմամբ 21.4%-ի չափով պակաս է եղել:

Նշանակալի հաշիվներ են ընտրվել սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովություն (1102-12001՝ 15,539,964.84 հազ.դրամ), աշխատանքային կենսաթոշակների ապահովություն

(1102-12003՝ 119,628,959.02 հազ.դրամ), ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների ապահովություն (1205-12001՝ 11,630,047.83 հազ.դրամ), կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ապահովություն (1205-12002՝ 2,571,122.54 հազ.դրամ), ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցության ապահովություն (1225՝ 22,584,291.89 հազ. դրամ) ծրագրերը: Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումները ներկայացված են ստորև:

**Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներ**

**Աղյուսակ 1**

| | Ծրագիր/միջոցառում | Գումար, հազ.դրամ |
|---|---|---|
| 1011 | Անապահով սոցիալական խմբերին աջակցություն՝ այդ թվում | 15,185,643.80 |
| 1011-11001 | Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում | 125,148.97 |
| 1011-12001 | Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ | 15,060,494.83 |
| 1102 | Կենսաթոշակային ապահովություն՝ այդ թվում | 137,523,177.24 |
| 1102-11001 | Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում | 20,882.52 |
| 1102-11002 | Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում | 604,030.25 |
| 1102-12001 | Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ | 15,539,964.84 |
| 1102-12002 | Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ | 302,158.72 |
| 1102-12003 | Աշխատանքային կենսաթոշակներ | 119,628,959.02 |
| 1102-12004 | ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ | 1,412,181.89 |
| 1205 | Սոցիալական ապահովություն՝ այդ թվում | 14,380,528.52 |
| 1205-12001 | Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում | 11,630,047.83 |

| | | |
|---|---|---|
| | նպաստներ | |
| 1205-12002 | Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ | 2,571,122.54 |
| 1205-12004 | Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին | 41,300.00 |
| 1205-12005 | Աջակցություն զոհվածների ընտանիքներին | 136,100.00 |
| 1205-12007 | ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն | 1,958.15 |
| 1225 | Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն՝ այդ թվում | 22,584,291.89 |
| 1225-12001 | Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն | 209,300.00 |
| 1225-12002 | Կորոնավիրուսի (COVID-19)հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն | 16,635,861.99 |
| 1225-12003 | Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում) | 0 |
| 1225-12004 | Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում) | 964,325.50 |
| 1225-12007 | Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 11 միջոցառում) | 786,219.30 |
| 1225-12008 | Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 12 միջոցառում) | 1,842,928.67 |
| 1225-12009 | Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխ. շուկ. գոյացած դժվ. արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլ. էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոն. տնտ. հետ. չեզոքացման 16 միջ.) | 2,145,656.43 |

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է 33,646 շահառուի տրամադրվեր 15,566,691.04 հազ. դրամ գումար: Վեց ամսվա ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 15,539,964.84 հազ.դրամ գումար 31,955 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածում պլանավորվածից 26,726.20 հազ. դրամ պակաս տրամադրելը և 1,691-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների վճարած կենսաթոշակ-ամիսների քանակով, իսկ ճշտված բյուջեի նկատմամբ տարբերությունը պայմանավորված է բյուջեի համամասնությունների տեղաշարժման ժամանակ իրավունք ձեռք բերած և ֆինանսավորման ժամանակ փաստացի կենսաթոշակառուների թվաքանակների տարբերությամբ:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակում աշխատանքային կենսաթոշակները ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 468,761 շահառուի՝ 122,250,128.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 450,819 շահառուի տրամադրվել է 119,628,959.02 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 2,621,168.98 հազ. դրամ պակաս տրամադրելը և 17,942-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների հանրապետությունից բացակայելու հանգամանքով:

Սոցիալական ապահովություն ծրագրի ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների տրամադրման միջոցառման շրջանակում ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է 12,384,129.39 հազ. դրամ տրամադրվեր 67,087 շահառուի: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 11,630,047.83 հազ. դրամ 70,648 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 754,081.56 հազ. դրամ պակաս տրամադրելը և 3,561-ով ավել շահառուների ըստ Հավելված 2-ի պայմանավորված է իրավունք ձեռք բերած նպաստառուների թվաքանակի աճով և տարեկան գումարի

նկատմամբ համամասնություններով 1-ին վեց ամիսներին 60 տոկոս սահմանելու հանգամանքով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստների տրամադրման միջոցառման շրջանակում ըստ առաջին վեց ամիսների ճշտված պլանի պետք է 2,676,100.0 հազ. դրամ տրամադրվեր 12,481 շահառուի: Վեց ամիսերի ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 2,571,122.54 հազ. դրամ 12,455 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 104,977.46 հազ. դրամ պակաս տրամադրելը և 26-ով շահառուների թվաքանակի նվազումը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է կենսաթոշակառուների և նպաստառուների փաստացի մահերի հանգամանքով:

Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն (1225) ծրագիրը իր հերթին բաղկացած է հետևյալ միջոցառումներից.

- Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցությամբ (1225-12001) ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 3,000 շահառուի՝ 300,000 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 2,093 շահառուի տրամադրվել է 209,300 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 90,700 հազ. դրամ պակաս տրամադրելը և 907 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով:

**Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն միջոցառման շրջանակում օգնություն ստացած անձանց և գումարի վերաբերյալ ըստ տրամադրված տեղեկատվության**

**Աղյուսակ 2**

| Ստացողների քանակ | Ստացված գումար ՀՀ դրամ | Շահառուների քանակ | Վճարված գումարը, ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 741 | 100,000 | 741 | 74,100,000 |
| 474 | 200,000 | 948 | 94,800,000 |
| 116 | 300,000 | 348 | 34,800,000 |
| 14 | 400,000 | 56 | 5,600,000 |
| **Ընդամենը 1345** | | **2,093** | **209,300,000** |

- Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցությունը (1225-12002) ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 17,060,165.8 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 16,635,861.99 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 424,303.81 հազ. դրամ պակաս տրամադրելը պայմանավորված է փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով: Շահառուների քանակ ոչ ֆինանսական ցուցանիշներում նշված չէ:
- Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում) (1225-12003) ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 6,723 շահառուի՝ 457,164 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ոչ ֆինանսկան ցուցանիշների փաստացի գումարի չարտացոլումը, պայմանավորված է այն հանգամանքով, որ ծախսերը կատարվել են 12002 (Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն) միջոցառման հաշվին մինչև ԲՍԿ համապատասխան միջոցառման համար հաշվեհամարի բացումը:

- Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում) (1225-12004) ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 15,500 շահառուի՝ 1,550,000.00 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 9,643 շահառուի տրամադրվել 964,325.50 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 585,674.50 հազ. դրամ պակաս տրամադրելը և 5,857 շահառուների թվաքանակի նվազեցումը պայմանավորված է փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով:
- Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 11 միջոցառում) (1225-12007) ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 450,827 շահառուի՝ 786,219.4 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 450,827 շահառուի տրամադրվել է 786,219.3 հազ. դրամ գումար: Շահառուների անվանացանկ առկա չէ:
- Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 12 միջոցառում) (1225-12008) ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 486,434 շահառուի՝ 1,842,928.8 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ

ֆինանսական ցուցանիշների փաստացի 486,434 շահառուի տրամադրվել է 1,842,928.67 հազ. դրամ գումար: Շահառուների անվանացանկ առկա չէ:

- Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխ. շուկ. գոյացած դժվ. արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլ. էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոն. տնտ. հետ. չեզոքացման 16 միջ.) (1225-12009) ըստ վեց ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 714,524 շահառուի՝ 2,145,656.6 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Վեց ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 714,524 շահառուի տրամադրվել է 2,145,656.43 հազ. դրամ գումար: Շահառուների անվանացանկ առկա չէ:

**Գնումների կազմակերպման գործընթացի վերաբերյալ**

ՍԱԾ-ի 2020թ.-ի գնումների պլանով նախատեսվել է 2,174,845.1 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում գնումների պլանը 19 անգամ ենթարկվել է փոփոխության, որի արդյունքում հաշվետու ժամանակահատվածի փոփոխված գնումների պլանի գումարը կազմել է 2,191,173.6 հազ. դրամ:

Ներկայացված տեղեկատվության համաձայն 2020թ. գնումների պլանից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ կազմակերպված թվով 103 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 122 պայմանագիր ընդհանուր 2,077,791.3 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Ըստ պայմանագրերի նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարվել է 879,680.8 հազ. դրամ: Մասնավորապես՝

- Գնանշման հարցման ընթացակարգով իրականացված 26 հատ գնումներ - կնքվել են 45 հատ պայմանագրեր 114,010.52 հազ. դրամ պայմանագրային արժեքով,
- ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ

ենթակետով սահմանված ցանկում ընդգրկված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների վերաբերյալ տեղեկատվություն – կնքվել են 46 հատ պայմանագրեր 1,917,418.8 հազ. դրամ պայմանագրային արժեքով,

- Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգերով իրականացված գնումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ բացառությամբ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված – կնքվել են 31 հատ պայմանագրեր 46,362 հազ. դրամ պայմանագրային արժեքով,
- Գնում չհանդիսացող ծախսեր – կնքվել է մեկ պայմանագիր 720.0 հազ. դրամի չափով:

**Վեց ամիսների ընթացքում իրականացված գնումների ուղղությունների, կնքված պայմանագրերի ընդհանուր քանակների և գումարների վերաբերյալ (հազ. դրամ)**

**Աղյուսակ 3**

| ՀՀ | Ընթացակարգը | Պայմանագրի արժեքը | Վճարված գումարը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 9 | 14 |
| 1 | ԳՀ-գնանշման հարցման միջոցով իրականացված գնումներ | 114,010.5 | 30,830.7 |
| 2 | ՄԱ-ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցանկում ընդգրկված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների վերաբերյալ տեղեկատվությունը | 1,917,418.8 | 826,658.7 |
| 3 | ՄԱ-Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգերով իրականացված գնումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ բացառությամբ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված | 46,362 | 22,191.4 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | ԳՉԾ-գնում չհանդիսացող ծախսեր | 720.0 | 360 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 2,078,511.3 | 880,040.8 |

# 5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի ապահովություն (1205-12002՝ 2,571,122.54 հազ. դրամ) միջոցառման շրջանակներում սոցիալական ապահովություն ծրագրի Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստների տրամադրման միջոցառման շրջանակում ըստ առաջին վեց ամիսների ճշտված պլանի պետք է 2,676,100.0 հազ. դրամ տրամադրվեր 12,481 շահառուի: Վեց ամիսերի ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 2,571,122.54 հազ. դրամ 12,455 շահառուի: Ստացված տեղեկատվության համաձայն 2,565,800 հազ. դրամ գումար է փոխանցվել 12,838 շահառուի, ընդ որում 11,651 շահառուի 2,330,200 հազ. դրամ թաղման նպաստի վճարումը կատարվել է բանկային փոխանցման միջոցով, իսկ 1,187 շահառուի համար փոխանցված 235,600 հազ. դրամ գումարը «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով: Առկա է անհամապատասխանություն ստացված տեղեկատվության և ոչ ֆինանսական ցուցանիշներում արտացոլված շահառուների և գումարների միջև, մասնավորապես ավել է 383 շահառու և պակաս 5,322,54 հազ. դրամ գումար:

Ստացված տեղեկատվությունը ըստ ստացողների համադրումը ներկայացված է ստորև աղյուսակում: Աղյուսակում արտացոլված բանկերի միջոցով 1 ստացողը 25 շահառուի համար և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով 1 ստացողը 10 շահառուի մասով նույն անձն է:

Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ (հազ . դրամ)

Աղյուսակ 4

| Վճարում իրականացնող | Շահառուների քանակ | Ստացողների քանակը | Շահառուների քանակ ըստ յուրաքանչյուր ստացողի | Ստացված գումարը |
|---|---|---|---|---|
| բանկեր | 11,199 | 11,199 | 1 | 2,239,800.00 |
| | 350 | 175 | 2 | 70,000.00 |
| | 21 | 7 | 3 | 4,200.00 |
| | 5 | 1 | 5 | 1,000.00 |
| | 14 | 2 | 7 | 2,800.00 |
| | 13 | 1 | 13 | 2,600.00 |
| | 24 | 1 | 24 | 4,800.00 |
| | 25 | 1 | 25 | 5,000.00 |
| «Հայփոստ» | 1,159 | 1,159 | 1 | 231,800.00 |
| | 18 | 9 | 2 | 3,600.00 |
| | 10 | 1 | 10 | 200.00 |
| **Ընդամենը** | **12,838** | **12,556** | | **2,565,800.00** |

***Հաշվեքննության օբյեկտի բացատրություններ.***

Համաձայն առևտրային բանկերի և «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ Ծառայության փոխադարձ հաշվարկների ակտերի՝ կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ (այսուհետ՝ թաղման նպաստ) (1205-12002) միջոցառման շրջանակում 2020թ. հունվար–հունիս ամիսների ընթացքում 12,858 շահառուի համար (12,455 շահառու թվաքանակը ճշգրտվել է ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների մուտքագրումից հետո) վճարվել է 2,571,122.6 հազ. դրամ:

Համաձայն Ծառայության տեղեկատվական ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության (այսուհետ՝ ՏՏ) կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2020թ-ի առաջին կիսամյակի ընթացքում վճարման ցուցակներում ներառվել է 12838 անձի մահվան կապակցությամբ վճարվող թաղման նպաստ, որից 1187-ը՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով վճարվող կանխիկ ցուցակներում, իսկ 11651-ը՝ բանկերի միջոցով՝ վճարվող անկանխիկ ցուցակներում:

Ընդամենը կիսամյակի ընթացքում վճարվել է 12828 անձի թաղման նպաստ 2,565,600,000 ՀՀ դրամ չափով, որից «Հայփոստ»ի միջոցով՝ 1177 շահառուի 235,400,000 ՀՀ դրամ (աղյուսակը ներկայացվում է ստորև):

Այսպիսով, հաշվեքննության արձանագրությունում ներկայացված է ոչ թե փաստացի վճարված շահառուների թվաքանակը, այլ տվյալ ժամանակահատվածում վճարման ցուցակում ներառված շահառուների թվաքանակը՝ 12,838: Ըստ այդմ՝ հաշվեքննության արձանագրությունում արձանագրված 383 շահառուի տարբերությունն ընդունելի չէ:

| ***Ցուցակավորվել է (փրամադրվել է վճարման)*** | | | | |
|---|---|---|---|---|
| Վճարող | Վճարման ենթակա շահառուների քանակ | Ստացողների քանակ | Շահառուների քանակ ըստ յուրաքանչյուր ստացողի | Վճարված գումար |
| Բանկ | 11,199 | 11,199 | 1 | 2,239,800,000 |
| | 350 | 175 | 2 | 70,000,000 |
| | 21 | 7 | 3 | 4,200,000 |
| | 5 | 1 | 5 | 1,000,000 |
| | 14 | 2 | 7 | 2,800,000 |
| | 13 | 1 | 13 | 2,600,000 |
| | 24 | 1 | 24 | 4,800,000 |
| | 25 | 1 | 25 | 5,000,000 |
| Ընդամենը բանկ | 11,651 | 11,387 | | 2,330,200,000 |
| Փոստ | 10 | 1 | 10 | 2,000,000 |
| | 18 | 9 | 2 | 3,600,000 |
| | 1,159 | 1,159 | 1 | 231,800,000 |
| Ընդամենը փոստ | 1,187 | 1,169 | | 237,400,000 |
| **Ընդամենը** | **12,838** | **12,556** | | **2,567,600,000** |
| ***Վճարվել է*** | | | | |
| Բանկ | 11,651 | 11,387 | | 2,330,200,000 |
| Փոստ | 1,177 | 1,165 | | 235,400,000 |
| **Ընդամենը** | **12,828** | **12,552** | | **2,565,600,000** |

ՏՏ վճարման ցուցակների համաձայն՝ 2,565,600.0 հազ. դրամ ֆինանսավորված գումարի և «ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների»՝ 2,571,122.54 հազ. դրամի միջև 5,522.6 հազ. դրամի (ինչպես նաև դրան համապատասխան թվաքանակի) տարբերությունը պայմանավորված է ետ վերադարձված գումարների (Հայփոստ, բանկեր, առանձին ֆիզիկական անձիք), ինչպես նաև Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կենսաթոշակառուների թաղման նպաստների ֆինանսավորումների հաշվառումը և համադրումը (էլեկտրոնային կենսաթոշակ) համակարգի միջոցով դեռևս կարգավորված չլինելու հանգամանքով

(ըստ այդմ նշված տեղեկատվությունը հասանելի չէ ՏՏ-ին): Ըստ այդմ, որպես անհամապատասխանություն ընդունելի չէ:

Կենսաթոշակային օրենսդրության համաձայն, թաղման նպաստը վճարվում է հուղարկավորությունը կատարած անձին: Գործնականում այն կարող է վճարվել ցանկացած անձի, ով ներկայացրել է թաղման նպաստ նշանակելու գրավոր դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր (մահվան վկայականի բնօրինակը և այլն): Ընդ որում, կենսաթոշակային օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանափակում մեկ անձի կողմից մեկից ավելի մահվան դեպքերով թաղման նպաստ ստանալու հնարավորությունը: Նշվածի վերաբերյալ Ծառայությունը պարզաբանում է ներկայացրել նաև 2019 թվականի հաշվեքննության արդյունքների կապակցությամբ:

2. Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն միջոցառման (1225-12002) շրջանակներում ըստ վեց ամիսների փաստացի տրամադրվել է 16,635,861.99 հազ. դրամ գումար: Շահառուների քանակ ոչ ֆինանսական ցուցանիշում նշված չէ: Ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում) միջոցառման (1225-12003) ծախսը ներառվել է սույն միջոցառման ծախսերի մեջ:

Ստացված տեղեկատվության համաձայն Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 6-րդ, 8-րդ, 9-րդ և 20-րդ միջոցառումների շահառուների ընդհանուր քանակը կազմում է 347,959, իսկ վճարված գումարը՝ 15,692,933.385 հազ դրամ: Առկա է 942,928.605 հազ. դրամի անհամապատասխանություն փաստացի ծախսի և տվյալ միջոցարումների անվանացանկերի գումարների միջև: Տվյալ միջոցառումների շահառուների և վճարված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

**Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 6-րդ, 8-րդ, 9-րդ և 20-րդ միջոցառումների շրջանակում տրամադրված գումարների վերաբերյալ**

**Աղյուսակ 5**

| Միջոցառման անվանումը | Միջոցառման շահառուների թվաքանակը | Յուրաքանչյուր շահառուին վճարված գումար | Վճարված գումարը, հազ. դրամ |
|---|---|---|---|
| Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում) | 8,091 | 68,000 | 550,188.00 |
| Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում | 133,002 | տարբեր գումարներ | 8,973,281.88 |
| Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում | 190,283 | 26,500 | 5,042,499.5 |
| Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում | 16,573 | 68,000 | 1,126,964.00 |
| **Ընդամենը** | **347,949** | | **15,692,933.38** |

***Հաշվեքննության օբյեկտի առարկություններ և բացատրություններ.***

Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն միջոցառման (1225-12002) շրջանակներում ըստ վեց ամիսների փաստացի տրամադրվել է 16,635,862.00 հազ. դրամ, որի մեջ ներառված են ինչպես 6-րդ, 8-րդ, 9-րդ և 20-րդ, *այնպես էլ 13–րդ* միջոցառման շրջանակում իրականացված ծախսերը: Վերջինս չի արտացոլվում տեղեկատվական շտեմարաններում: Ըստ այդմ՝ արձանագրված 942,928,605 դրամ անհամապատասխանությունն ընդունելի չէ:

Հարկ է նկատի ունենալ, որ 13–րդ միջոցառման (ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 16-ի N 557-Լ որոշում) շրջանակներում Ծառայության կողմից չի իրականացվել շահառուների տվյալների հաշվառում, ցուցակների ձևավորում և Ծառայությունը հանդես է եկել միայն որպես ֆինանսավորող: Նշված միջոցառման

ֆինանսավորումը ևս իրականացվել է 1205 ծրագրի 12002 միջոցառման շրջանակներում, ուստի անհրաժեշտ է հաշվարկներում ՏՏ կողմից ֆինանսավորման ներկայացված հայտերի գումարին ավելացնել 13–րդ միջոցառման ֆինանսավորման գումարը, որպեսզի ստացվի ամբողջական պատկեր Ծառայության կողմից ֆինանսավորված գումարների մասով, որից էլ պետք է նվազեցնել ետ վերադարձ գումարները (ՏՏ համակարգով դրանք ևս չեն արտացոլվում): Այսպես,

15,705,951,631 + 1,221,308,000 - 291,397,537 = **16,635,862,094** (որն էլ հավասար է փաստացի ծախսի գումարին):

***Հաշվեքննող խմբի արձագանքը.***

Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն 1225 ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների (այդ թվում 13-րդ միջոցառման) մասով անդրադարձ կկատարվի հետագա հաշվեքննությունների ընթացքում:

3. Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում) միջոցառման (1225-12004) շրջանակներում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշի 9,643 շահառուի տրամադրվել է 964,325.50 հազ. դրամ: Ստացված տեղեկատվության համաձայն 9,719 շահառուի տրամադրվել է 971,900.00 հազ. դրամ աջակցություն (յուրաքանչյուր շահառուին 100,000 ՀՀ դրամ աջակցություն): Առկա է անհամապատասխանություն թվով 76 շահառուի և 7,574.50 հազ. դրամի չափով:

***Հաշվեքննության օբյեկտի բացատրություններ.***

Աջակցության կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց աջակցության (7-րդ միջոցառում) միջոցառման շրջանակներում արձանագրված 7,574.50 հազ. դրամ տարբերությունը (համապատասխան շահառուների թվաքանակը) ետ վերադարձված գումար է, որը չի արտացոլվում ՏՏ համակարգերում: Ըստ այդմ, որպես անհամապատասխանություն ընդունելի չէ:

| **Միջոցառում** | **Ֆինանսավորում** | | **Ետ վերադարձ** | **Ծախս** |
|---|---|---|---|---|
| | **քանակ** | **գումար** | | **գումար** |
| 7 | 9,719 | 971,900,000 | 7,574.50 | **964,325,500** |

# 6.ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

## ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

| Թիվ | Առաջարկություններ | Ընդունելի է/ Ընդունելի չէ | Կատարված է/ Ընթացքում է | Հիմնավորումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Կենսաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշներին վերաբերալ հաշվետվութան աշխատանքային կենսաթոշակներ 442,244 շահառուի փաստացի տրամադրվել է 59,843,200.28 հազ. դրամ գումար: Ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվել է, որ 3 ամիսների ընթացքում աշխատանքաիին կենաաթոշակ է վճարվել 454,988 շահառուի, որը կազմել է 59,827,300.61 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն ոչ ֆինանսական ցուցանիշներում զետեղված գումարի և ստացված տեղեկատվության միջև: Մասնավորապես՝ հաշվետվությունում 12,744 շահառու պակաս է արտացոլված: | *«Ընդունված է»* | *«Ընթացքում է»* | Ըստ Ծառայության ակտերով ամրագրված տեղեկատվության՝ «Աշխատանքային կենսաթոշակ» ծրագրի գծով 2020 թվականի I եռամսյակի վճարումների միջին թվաբանական թվաքանակը կազմում է կազմում է **442154** շահառու, անվանական միջին թվաքանակը **442293** շահառու: |

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՊԵՏ

«22» 12 2020 թ. N 01/12/29605-20

Ձեր՝ 10.12.2020թ. N ՀՊԵ-ԱԲ-148

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա.ԲԱԽՉԱԳՈՒԼՅԱՆԻՆ

**Հարգելի՛ պարոն Բախչագուլյան,**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 145-Ա որոշման հիման Սոցիալական ապահովության ծառայությունում (այսուհետ՝ Ծառայություն) 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման վերաբերյալ հաշվեքննության արձանագրության մեջ նշված բոլոր անհամապատասխանությունների վերաբերյալ Ծառայության կողմից ներկայացվում են հետևյալ առարկությունները և բացատրությունները.

***1. Արձանագրության «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների» 1-ին կետի վերաբերյալ.***

Համաձայն առևտրային բանկերի և «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ Ծառայության փոխադարձ հաշվարկների ակտերի՝ կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ (այսուհետ՝ թաղման նպաստ) (1205-12002) միջոցառման շրջանակում 2020թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում 12,858 շահառուի համար (12,455 շահառու թվաքանակը ճշգրտվել է ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների մուտքագրումից հետո) վճարվել է 2,571,122.6 հազ. դրամ:

Համաձայն Ծառայության տեղեկատվական ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության (այսուհետ՝ ՏՏ) կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2020թ-ի առաջին կիսամյակի ընթացքում վճարման ցուցակներում ներառվել է 12838 անձի մահվան կապակցությամբ վճարվող թաղման նպաստ, որից



ՄՏԻՑ No 1445-787
«22» 12 2020թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

1187-ը՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով վճարվող կանխիկ ցուցակներում, իսկ 11651-ը՝ բանկերի միջոցով՝ վճարվող անկանխիկ ցուցակներում: Ընդամենը կիսամյակի ընթացքում վճարվել է 12828 անձի թաղման նպաստ 2,565,600,000 ՀՀ դրամ չափով, որից «Հայփոստ»-ի միջոցով՝ 1177 շահառուի 235,400,000 ՀՀ դրամ (աղյուսակը ներկայացվում է ստորև):

Այսպիսով, հաշվեքննության արձանագրությունում ներկայացված է ոչ թե փաստացի վճարված շահառուների թվաքանակը, այլ տվյալ ժամանակահատվածում վճարման ցուցակում ներառված շահառուների թվաքանակը՝ 12,838: Ըստ այդմ՝ հաշվեքննության արձանագրությունում արձանագրված 383 շահառուի տարբերությունն ընդունելի չէ:

| ***Ցուցակավորվել է (փրամադրվել է վճարման)*** | | | | |
|---|---|---|---|---|
| Վճարող | Վճարման ենթակա շահառուների քանակ | Ստացողների քանակ | Շահառուների քանակ ըստ յուրաքանչյուր ստացողի | Վճարված գումար |
| Բանկ | 11,199 | 11,199 | 1 | 2,239,800,000 |
| | 350 | 175 | 2 | 70,000,000 |
| | 21 | 7 | 3 | 4,200,000 |
| | 5 | 1 | 5 | 1,000,000 |
| | 14 | 2 | 7 | 2,800,000 |
| | 13 | 1 | 13 | 2,600,000 |
| | 24 | 1 | 24 | 4,800,000 |
| | 25 | 1 | 25 | 5,000,000 |
| Ընդամենը բանկ | 11,651 | 11,387 | | 2,330,200,000 |
| Փոստ | 10 | 1 | 10 | 2,000,000 |
| | 18 | 9 | 2 | 3,600,000 |
| | 1,159 | 1,159 | 1 | 231,800,000 |
| Ընդամենը փոստ | 1,187 | 1,169 | | 237,400,000 |
| **Ընդամենը** | **12,838** | **12,556** | | **2,567,600,000** |
| ***Վճարվել է*** | | | | |
| Բանկ | 11,651 | 11,387 | | 2,330,200,000 |
| Փոստ | 1,177 | 1,165 | | 235,400,000 |
| **Ընդամենը** | **12,828** | **12,552** | | **2,565,600,000** |

ՏՏ վճարման ցուցակների համաձայն՝ 2,565,600.0 հազ. դրամ ֆինանսավորված գումարի և «ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների»՝ 2,571,122.54 հազ. դրամի միջև 5,522.6 հազ. դրամի (ինչպես նաև դրան համապատասխան թվաքանակի) տարբերությունը պայմանավորված է ետ վերադարձված գումարների (Հայփոստ, բանկեր, առանձին ֆիզիկական անձիք), ինչպես նաև Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կենսաթոշակառուների թաղման նպաստների ֆինանսավորումների հաշվառումը և համադրումը (էլեկտրոնային կենսաթոշակ) համակարգի միջոցով դեռևս կարգավորված չլինելու հանգամանքով (ըստ այդմ նշված տեղեկատվությունը հասանելի չէ ՏՏ-ին): Ըստ այդմ, որպես անհամապատասխանություն ընդունելի չէ:

Կենսաթոշակային օրենսդրության համաձայն, թաղման նպաստը վճարվում է հուղարկավորությունը կատարած անձին: Գործնականում այն կարող է վճարվել ցանկացած անձի, ով ներկայացրել է թաղման նպաստ նշանակելու գրավոր դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր (մահվան վկայականի բնօրինակը և այլն): Ընդ որում, կենսաթոշակային օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանափակում մեկ անձի կողմից մեկից ավելի մահվան դեպքերով թաղման նպաստ ստանալու հնարավորությունը: Նշվածի վերաբերյալ Ծառայությունը պարզաբանում է ներկայացրել նաև 2019 թվականի հաշվեքննության արդյունքների կապակցությամբ:

Առդիր տեղեկանքով ներկայացվում է վերոգրյալ տարբերությունների ձևավորման հաշվարկները և պարզաբանումները աղյուսակների տեսքով (ՏԵՂԵԿԱՆՔ 1):

***2. Արձանագրության «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների» 2-րդ կետի վերաբերյալ.***

Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով ճգնաժամի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն միջոցառման (1225-12002) շրջանակներում ըստ վեց ամիսների փաստացի տրամադրվել է 16,635,862.00 հազ. դրամ, որի մեջ ներառված են ինչպես 6-րդ, 8-րդ, 9-րդ և 20-րդ, <u>*այնպես էլ 13–րդ*</u> միջոցառման շրջանակում իրականացված ծախսերը: Վերջինս չի արտացոլվում

տեղեկատվական շտեմարաններում: Ըստ այդմ՝ արձանագրված 942,928,605 դրամ անհամապատասխանությունն ընդունելի չէ:

Հարկ է նկատի ունենալ, որ 13–րդ միջոցառման (ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 16-ի N 557-Լ որոշում) շրջանակներում Ծառայության կողմից չի իրականացվել շահառուների տվյալների հաշվառում, ցուցակների ձևավորում և Ծառայությունը հանդես է եկել միայն որպես ֆինանսավորող: Նշված միջոցառման ֆինանսավորումը ևս իրականացվել է 1205 ծրագրի 12002 միջոցառման շրջանակներում, ուստի անհրաժեշտ է հաշվարկներում ՏՏ կողմից ֆինանսավորման ներկայացված հայտերի գումարին ավելացնել 13–րդ միջոցառման ֆինանսավորման գումարը, որպեսզի ստացվի ամբողջական պատկեր Ծառայության կողմից ֆինանսավորված գումարների մասով, որից էլ պետք է նվազեցնել ետ վերադարձ գումարները (ՏՏ համակարգով դրանք ևս չեն արտացոլվում): Այսպես,

15,705,951,631 + 1,221,308,000 - 291,397,537 = **16,635,862,094** (որն էլ հավասար է փաստացի ծախսի գումարին):

Առդիր տեղեկանքով ներկայացվում է վերոգրյալ տարբերության ձևավորման մանրամասն հաշվարկն ու պարզաբանումները՝ աղյուսակների տեսքով (ՏԵՂԵԿԱՆՔ 2):

***3. Արձանագրության «Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների» 3-րդ կետի վերաբերյալ.***

Աջակցության կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց աջակցության (7-րդ միջոցառում) միջոցառման շրջանակներում արձանագրված 7,574.50 հազ. դրամ տարբերությունը (համապատասխան շահառուների թվաքանակը) ետ վերադարձված գումար է, որը չի արտացոլվում ՏՏ համակարգերում: Ըստ այդմ, որպես անհամապատասխանություն ընդունելի չէ:

| Միջնորդում | Ֆինանսավորում | | Ետ վերադարձ | Ծախս |
|---|---|---|---|---|
| | քանակ | գումար | | գումար |
| 7 | 9,719 | 971,900,000 | 7,574.50 | **964,325,500** |

12/22/2020

X

ԱՆԻ ԱՄԻՐՇԱԴՅԱՆ

Signed by: AMIRSHADYAN ANI 6908870588

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Ա.ԱՄԻՐՇԱԴՅԱՆ**

Կատ. իրավաբանական վարչություն
Հեռ. 060-654-030

## ՏԵՂԵԿԱՆՔ 1

ասթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում րվող թաղման նպաստ միջոցառման գծով պահանջի, ֆինանսավորված, վճարված և ետ վերադարձ գումարների վերաբերյալ
2020թ. (I ԿԻՍ.)

հազ. դրամ

| Ծրագրի անվանումը | Պահանջ | | Ֆինանսավորում | Ետ վերադարձ | | Փաստացի վճարումների թվաքանակ | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|---|---|---|
| | թվաքանակ | գումար | | թվաքանակ | գումար | | |
| 1205-12002 | 12,871 | 2,574,200.0 | 2,573,200.0 | 8 | 2,077.5 | 12,858 | 2,571,122.5 |
| *Հայփոստ>> ՓԲԸ* | *1,168* | 233,600.0 | 232,600.0 | 5 | 1,000.0 | 1,158 | 231,600.0 |
| *նկեր* | *11,441* | 2,288,200.0 | 2,288,200.0 | 2 | 877.5 | 11,439 | 2,287,322.5 |
| *Հայփոստ>> ՓԲԸ (ուժային )* | *19* | 3,800.0 | 3,800.0 | | | 19 | 3,800.0 |
| *ափի ՊԲ* | *32* | 6,400.0 | 6,400.0 | | | 32 | 6,400.0 |
| *նկեր (ուժային)* | *211* | 42,200.0 | 42,200.0 | 1 | 200.0 | 210 | 42,000.0 |

*անոթություն՝ SS համակարգով չարտացոլվող ցուցանիշները ներկայացված են կանաչ գույնով*

ուրիլ ամսին մեխանիկական վրիպման արդյունքում 200,000 դրամ ավել ֆինանսավորման պահանջ է ներկայացվել, որը ետ է վերադարձվել մայիս ամսին: Արդյունքում գումարը SS վճարման ցուցակներում չի երևում, սակայն փաստացի ֆինանսավորված գումարներում երևում է

ած տեղեկատվության համաձայն» 2,565,600 հազ դրամը ճշգրտելով SS համակարգում չարտացոլվող ցուցանիշներով՝ կստանանք հետևյալը՝
**2,565,600.0+200.0+6400.0-877.5-200.0=2,565,600.0+5,522.5=2,571,122.5, *որը նույնն է ինչ Փաստացի ծախսը:***

12,828 շահառու վճարման թվաքանակը ճշգրտելով SS համակարգում չարտացոլվող ցուցանիշներով՝ կստանանք հետևյալը՝
12,828 + 1+32-2-1 =12,828 + 30 = 12,858, ***որը նույնն է ինչ Փաստացի ծախսի թվաքանակը:***

| ությամբ ներկայացված պարզաբանմամբ՝ SS համակարգով արտացոլվող ցուցանիշների հանրագումար | | Փաստացի վճարումներ | | Տարբերությունը | |
|---|---|---|---|---|---|
| Գումար | թվաքանակ | Գումար | թվաքանակ | Գումար | թվաքանակ |
| 2,565,600.0 | 12,828 | 2,571,122.5 | 12,858 | 5,522.50 | 30 |

*ամապրնպեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ՝*
*Յրուպյան*

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք 2

«Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման» ծրագրերով
Ֆինանսավորված և ետ վերադարձված գումարների մասին
2020թ. հուլիսի 01 դրությամբ

/դրամ/

| ցառում | I կիսամյակ 2020թ. փաստացի ցուցանիշներ | | | | SS | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ֆինանսավորում | | Ետ վերադարձ, այդ թվում՝ Լիազոր մարմնի պահանջով | Ծախս | SS կողմից ներկայացված ֆինանսավորման հայտ | | Լիազոր մարմնի պահանջով ետ վերադարձ գումար | Ծախս | Տարբերության արձանագրված |
| | քանակ | գումար | գումար | գումար | քանակ | գումար | գումար | գումար | |
| սռում | 8,091 | 550,188,000 | 9,452,000 | 540,736,000 | 8,091 | 550,188,000 | | 550,188,000 | (9,452,000) |
| ռռում | 133,003 | 8,973,341,631 | 5,902,033 | 8,967,439,598 | 133,003 | 8,973,341,631 | 59,751 | 8,973,281,880 | (5,842,282) |
| ռռում | 190,772 | 5,055,458,000 | 266,616,604 | 4,788,841,396 | 190,770 | 5,055,458,000 | 12,958,600 | 5,042,499,400 | (253,658,004) |
| առում | 86,718 | 1,221,308,000 | 9,426,900 | 1,211,881,100 | | | | - | 1,211,881,100 |
| առում | 16,573 | 1,126,964,000 | | 1,126,964,000 | 16,573 | 1,126,964,000 | | 1,126,964,000 | - |
| ձնը | 435,157 | 16,927,259,631 | 291,397,537 | 16,635,862,094 | 348,437 | 15,705,951,631 | 13,018,351 | 15,692,933,280 | 942,928,814 |

։ տեղեկատվությունը ճշգրտելով SS համակարգում չարտացոլվող գումարներով (13-րդ միջոցառման ֆինանսավորման և ետ վերադարձված գումարներ)՝ ստացվում է՝

705,951,631 + 1,221,308,000 - 291,397,537 = 16,635,862,094 դրամ, որն էլ հավասար է ըստ վեց ամիսների փաստացի տրամադրված գումարին՝ փաստացի ծախսին

| | | |
|---|---|---|
| ստացված տվության վճարված գումար | | 15,705,951,631 |
| առձաս րման | + | 1,221,308,000 |
| մար | = | 16,927,259,631 |
| արձ | - | 291,397,537 |
| յուն | = | 16,635,862,094 |
| Ծախս | - | 16,635,862,094 |
| թյուն | = | - |

ստնտեսագիտական և
իական հաշվառման վարչության պետ

Կ. Բրուտյան